

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄՐԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ, 4 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻՒ 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ. (Բ.) Սրբազայր

ԿՈՆՍԱԿՐԱՆՆԵՐ

ԳԱԶՐԻԿ

ՊՏԱՐ ԷՋԵՐ. — Կա՞յ Աստուած մը (Թարգմ.)

Յ. ԱԼԹՈՒՆԵԱՅ

ԾԱԳՈՒՄՆ ԵՐԲԱՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ. — Սամուէլ. —

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

Մարգարէից Դպրոցները

ՄՈՌՅՈՒԱԾ ԷՋԵՐ. — Ս. Հռիփիմեանց տօն ի Ս.

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՅ ԳԱՐԵԳԻՆ ԵՊ.

Էջմիածին

ԴԳՐԵՎԱՆՔՅԻ

Իրիկուան Ազօթը (քերթուած)

ԽԱԶԻՍԱՐ

Մտածումներ աշխարհի մեծագոյն խորհրդներուն

ՏԻՐԱԲՐ ՎՐԴ.

Հսկարանուծիւն մը

Հայ եւ Բողոք. հասարակութեանց գործակցութիւնը

ԿՐԹ. ԽՈՐՀՈՒՐԴ ՄԱՐԱՇԻ

Կրթական գործին մէջ

ՀԱՅՈՒՀԻՆԵՐՈՒ ՄԱՍՆԱԽՈՒՄԷ

Հայ կինը Ամերիկայի մէջ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան լուրեր



Տպագր. Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբաւ-Հարաւ Մօրս-Թաշք. Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ

“ՏԱՃԱՐ”ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հինգ բաժանորդ պանոզը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՐԸ ԿԱՆԻԽԻ ԵՆ
ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է գիմել առ Զարմայր Քանանայ Կեզիւրեան, Կ. Պոլիս, Պէտիկթաւ, Հայոց եկեղեցի:

بشيكطاش ارمي كليساسنده «داجار» غزقي مديري پاپاس زارماير افندي


Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷ

«ՏԱՃԱՐ» ԿՐԾՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-
նորդ Տ. Արսէն Քհնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Տ. Ռուբէն Քհնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաթթեան
ԱՅՆԹԱՊ. — Տ. Գարեգին Քհնյ. Պողար-
եան
ԱՖԻՕՆ ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Քհնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ. — Առաջնորդ Տ. Բարգէն Եպս.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ. — Տ. Յարութեան Քհնյ. Սար-
գիսեան
ԵՕԶՂԱՏ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքեան
ԵՐԶՆԿԱ. — Տ. Մեսրոպ Քհնյ. Թորոսեան
ԶՄԻՒՌՆԻԱ. — Տ. Յարութեան Քհնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դաւուստ Քհնյ. Տ.
Դաւուստեան
ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻՒՄԻՒԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Քհնյ.
Նշանեան

ՄԱՐՍԵ. — Տ. Հմայեակ Քհնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐԶՈՒԱՆ. — Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ռակի Քհնյ. Պիպիեան
Շ. ԴԱՐԱՀԻՍԱՐ. — Տ. Նաթան Քհնյ.
Տառեան
ՈՒՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեան
ՊԱՆՏՐՄԱ-ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմբիւքեան
ՌՈՒՍՃՈՒՔ. — Տ. Մկրտիչ Քհնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏՈՍԹՕ. — Առաջնորդ. Տ. Գէորգ Ծ.
Վրդ. Ասլանեան
ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան
ՍԵԲԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Քհնյ Օտապաշեան.
ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Քհնյ. Թուխմանեան
ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիոնիսիոս Քհնյ. Տրէդ-
եան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԴԱ. — Տ. Գէորգ Քհնյ. Թէրշեան
ՓԱՐԻԶ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պետ Քհնյ. Քիպարեան
ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Քհնյ. Դերձակեան
ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐԾՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 4 ՅՈՒՆԻՍ 1911

ԹԻԻ 21

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ՍՐԲԱՎԱՅՐ ԿՈՒՍԱՍՏԱՆՆԵՐ

Որքա՛ն մօաէն դիտենք մեր Եկեղեցիի տօնակատարութիւնները, որքա՛ն աւելի շփում ունենանք յիշատակին հետ անոնց՝ որ մեր Եկեղեցիէն ընդունուած են իբրեւ յարգելի եւ պաշտելի անձերու անհատականութիւններ, ա՛յնքան շօշափելի ապացոյցներ պիտի գտնենք մեր կրօնական եւ հոգեւոր կեանքին գեղեցիկ կարգ ու սարքին համար, եւ ա՛յնքան մեծ ու խոր պիտի ըլլայ մեր սքանչացումը՝ Հայ-Քրիստոնէութեան տօրածումին եւ հաստատութեան համար զոհաբերուած հոգիներու հանդէպ:

Կը սիրէի հաւատալ թէ բոլոր հրէմարիտ Հայ-Քրիստոնեաները, իրենց փրկչին Տնօրինական յիշատակներով առկուն ամիսներու հոգեւոր կեանք մը բոլորելէ վերջ, Յիսուսի Ծնունդէն մինչեւ Անոր Համբարձումը եւ Ս. Հոգւոյն Գալուստը հարկ եղած մտամփոփ եւ ինքնայօժար ապաշխարու-

թիւնը, եւ Քրիստոսի երկնաւոր կեանքին ու փրկագործութեան խորհուրդին նուիրուած տօները կատարելէ վերջ, մէկ խօսքով հայ ուխտաւորը Պաղեստինն ու Երուսաղէմը այցելելէ վերջ, պիտի փափաքէր իր Հայրենիքը եւ իր Մայրենի Եկեղեցիին ուխտաւայրերն ալ այցելել:

Հայուն համար այդ ուխտագնացութեան ամենէն յարմար, կրնամ ըսել սրարտադի ժամանակը՝ ընդհանրապէս ամառուան երկու երեք ամիսները եւ մասնաւորապէս յառաջիկայ երեք չորս շաբաթներն են, երբ խոնջ ու վաստակաբեկ հայ նժդեհը պիտի կրնայ իր ազգային մեծ մենաստաններուն հովանիներովն ու անոնց զուլալ աղբիւրներովը հովահրիլ՝ ինչպէս Մշոյ Ս. Կարապետի, եւ Վաղարշապատու Ս. Հռիփսիմէի, Ս. Գալիանիէի եւ Ս. Շողակաթի վանքերուն մէջ:

Մն, ուրեմն, Լուսաւորչի զաւակներ, Անոր լոյս հաւատքովն ու կեանքին եւ գործերուն պատմութիւնով Ձեր միտքերը առաջնորդեցէք դէպի հեռուն՝ մեր ազգի առաջին սրբավայրե,

րը, գլուխնիդ խոնարհեցուցէք հո՛ն՝ ուր գահիճի սուրին տա՛լ ինկած են սուրբերու եւ սրբուհիներու գլուխները, սրտերնիդ ընծայ բերէք ոս հնճաններուն ու գերեզմաններուն՝ որոնց մէջ կոյս սիրտեր ճմլուած ու թաղուած են, ու երբ վերադառնաք Մշոյ Սուրբանին ու Էջմիածնի դշխոսներուն հանդատալոյրերէն, համագումար շեշտով բարձրագոյնի քարոզեցէք թէ Հայուն Եկեղեցիին հիմերը շատ ամուր են:

Ըսէ՛ք ամէնուն թէ ինչպէս Հայաստանի երկրորդ Լուսաւորիչը հիմնած է Հայոց ազգին համար առաջին եկեղեցիներու նիւթական շէնքերը: Պատմեցէք թէ երբ Հռովմէական կայսրութեան վերջին հալածանքէն (293 Յ. Ք.) 70 կոյսեր, Երուսաղէմն ու Եգիպտոսն այցելելէ վերջ անցան հիւսիս եւ մտան Հայաստան, թերեւ իրենցմէ առաջ բարեկամ անքուրեան կայսրը զրկած էր Հայոց թագաւորին իրենց դատաւարտութիւնը վճող հրովարտակը: Վաղարշապատի այգեստաններուն հնճանները վերջին կայս. նը պիտի ըլլային այդ կոյս հոգիներուն՝ որոնց երեսուն եւ եօթը իբրեւ անուշահոտ եւ համեղ ողկոյզներ կը ճմլուին եւ իրենց արիւնովը կ'ոռոգեն ու գիտէ նոյն իսկ թագաւորական սեղանին բաժակ մատուցող որթատունկերը: Իսկ ուրիշներ մեկնեցան մօտակայ երկիրները, անոնց ալ ստանելու համար Քրիստոնէութեան անմահաբար ըմպելին:

Հռովմէական կայսրութեան մէջ սկսուած վերջին բռնն հալածանքի զսհերէն մին ալ՝ ըսենք միջանկեալ կերպով՝ թէ եղաւ մեր Լուսաւորիչն աները կամ ըստ ումանց աներձագը՝ Սեբաստիոյ Աթանազիէս քորեպիս. կոպտը:

Այն տարին՝ որ այս հաճատակութիւնները կը կատարուէին, Վաղարշապատէն անդին, Արտաշատու Խորվիրապէն ալ՝ բամբիշի մը յայտնութիւնուն եւ ազդեցութիւնով՝ կենդանի հաճատակ մը կը բերուէր, վերջ տալու համար աստուածային պտուղահոտներուն: Յ) Թուականը պէտք է առյալէս արձանագրուած միայն Խորվիրապի փախուած կաթարիչին եւ Վաղարշապատի մօտակները կառուցուած երեք եկեղեցիներու դռներուն վրայ: Յաջորդ տարեթիւը միմիայն կրնանք քանդակել Ս. Կարապետի եւ Ս. Աթանազիէսի նշխարներուն վրայ կառուցուած սաճարներուն ճակատը: Վասն զի կը հաւատանք թէ հոն ուր թաղուեցան միանձնուհիները. ինքնին եղաւ եկեղեցի եւ սրբավայր, խնդիր չէ թէ կաթողիկէներով գմբէթաւորութիւնը որո՞ւն է առաջ, Հռիփսիմեանց եւ Գայիանեանց ու իրենց ընկերուհիներո՞ւն՝ զորս ամենէն առաջ Լուսաւորիչ ամփոփեց Խորվիրապէն ելլելէն անմիջապէս յետոյ, թէ Ս. Կարապետի եւ Ս. Աթանազիէսի՝ որոնց նշխարները փոխադրեց Կեսարիայէն դարձին, երբ այլեւս Ղեւոնդիոս Հայրապետէն ընդունած էր ձեռնադրութիւնը:

Այսքան գեղեցկայարմար տօնաշարքի մը եօթնեակը, որ լեցուն է ազգային յիշատակներով, պիտի կրնանոյ արդեօք գէթ քանի մը օրուան համար զմեզ վեր առնել մեր եկեղեցիին հանդէպ ցոյց տուած ուժացումի եւ անտարբերութեան գուրբէն: Չեմ կարծեր: Գրիգոր Լուսաւորիչ մը Խորվիրապէն կրնա՞յ ելլել եւ սրբավայրեր ու կուսաստաններ կրնա՞յ հիմնել ու հաստատել, ազգ մը ողջոյն լուսաւորել եւ Ազգային եկեղեցի մը հիմնել, Մայր տաճար մը կառուցաւ:

հեղ. բայց մինք չենք կրնար գտնել բարեհաճութիւնը ունենալ երթալ ունենդրելու իր կողմէ երգումս «Աստուած մեծ եւ հզօր» փառաբա. նական մաղթանքը եւ մեր երանա. շնորհ հայրապետներուն հոգեբղած գոհարազարդ «Անձինք հուրեւալք»ը, «Զմարդարէ բարձրելոյն» եւ «Ուրախ լեր»ը:

Մեր եկեղեցին իր հիմերուն մէջ ամրափակուած սուրբերուն յիշատա. կովը, եւ իր հաղար վեց հարիւր տաս. ներորդ սարեղարձովը կ'ուրախանայ, եւ մեր աչքերը՝ կոյր, ախմշները՝ խող եւ լեզուները համր կը մ'նան սյոհ հրաշափառ տեսիլքին հանդէպ:

«Ո՞ր վնաս է:»

ԳԱԶՐԻԿ

ՕՏԱՐ ԷՋԵՐ

ԿԱՅ ԱՍՏՈՒԱԾ ՄԸ

«Ի սկզբանէ Աստուած». — Ծմնդ. Ա. 1

Ամէն դար իրեն յատուկ Բրիստոնէու. թեան ախոյեաններու բանակ մը կը ծնցնէ իր մէջ, ճշմարտութեան ջատա. գովելը երբէք չունեցան զօրեղ թշնամի. ներս Մէկը միւսին յաջորդած եւ պար. տուած են, բայց նորէն երեւնալու համար միայն տարբեր ձեւով մը, կամ աւելի յանդգնօրէն երեւան գալու ուրիշ դարի մը մէջ: Այսպէս պիտի ըլլայ մինչեւ վերջն ալ ճշմարտութիւնն ու կեղծիքը, մեղքն ու անմեղութիւնը, Աստուած եւ սատանան ի վաղուց հետէ թշնամի են իրարու: Տասնութերորդ դարն ունէր իր աստուածեանները (Deist), տասնեւիննե. րորդը՝ իր չգիտակները (Agnostic), եւ քսաներորդ դարուն սկիզբը, զէմ յանդի. ման կը գտնուինք Անաստուածութեան (Atheism) մը, ա'յնքան լազարձակ, այն. քան խիղախ եւ նախադրձակ, որ երբէք ճանչցուած ըլլայ: Բրիստոնէական կրօնի բովանդակ պարտնակութիւնները այնքան

համարձակօրէն եւ յանդգնօրէն յարձա. կում կը կրեն, որ հազիւ կրնայ հաւա. սարած ըլլալ ո եւ է կերպով անցեալին մէջ:

Այսու ամենայնիւ թողէք ինձ որ ըսեմ թէ Բրիստոնէան վախնալու պէտք չունի: Ան ապահով պեանի վրայ կը կե. նայ: Երբէք անյողդողդե եղած չէ ան, որքան սյոսօր: Ան վախնալու բան մը չունի արդի քննապատուութենէն, գիտական հետախու. զութենէն, բանավարութենէն կամ նոր աստուածարանութենէ: Իր դիրքը ոչ միայն ողջամիտ արամաքանութեամբ հաստատուած է, այլ նաեւ իր հոգւոյն ուղիղ փորձառութեամբ: Քաջ Հիւկը. նօները սալի մը պատկերը ունէին ի. րօնց կնիքին վրայ, կոտրած մուրճերով չ'ըջապատուած, եւ այս վկայաբանու. թիւնը. —

Հեռո՞ւ, ո՞վ մուրճեր, դուք Խշնամի խումբեր:

Ձեր մուրճերը կը կոտորին, Աս. տուծոյ սալը կը մ'նայ:

Ան կը մնայ ու պիտի մնայ ճշմար. տութիւնը կ'ապրի, ճշմարտութիւնը կը տարածուի, ճշմարտութիւնը կը յաղթէ: Եւ զրուք զժողոպոց ոչ յաղթահարեցեն զնա:

«Կա՞յ Աստուած մը:» Ահա հարցումը զոր նկատի պիտի առնենք առաջին ան. գամ: Հարցումներու հարցումն է աս: Եթէ չկայ Աստուած, մեր կրօնի չէնք վայր. կիւնի մը մէջ կը կործանի: Կենդանի, անձնական, բարի, ինքնայայտ, անվա. ճան Աստուծոյ մը գոյութիւնը՝ մեր բո. լոր հաւատացած եւ գործած բաներու մեծ հիմնաքարն է (1): «Հաւատամք ի մի Աստուած»ը ոչ միայն Հանդանակին մէջ առաջին տեղը կը գրաւէ, այլ նաեւ հաս. տատուն մեծ սատարն է ներկային եւ յա. տեանականութեան միանգամայն, «Ամէն ինչ Անոր համար, Անոր մէջ, եւ զէպի Այն, Անոր փառք յա. խաեան»:

Դիտելի կէտ մըն է թէ, առաջին բանը զոր Ս. Գիրքը կը հաստատէ, այդ է թէ կայ Աստուած մը — «Ի Սկզբանէ ԱՍՏ. ՈՒԱԾ»:» Նշանաւոր եւ երեւելի յայտնու.

թիւն մըն է այդ Աստուած կայ եւ մենք կը հաւատանք անոր, կը հաւատանք անոր, քանզի կայ Բայց այդ չէ միայն մեր հաւատքին մեկնութիւնը: Մենք կը հաւատանք անոր, քանզի մեր նախահայրերէն ժառանգած ենք: Ան ազգային աւանդութիւն մըն է: Բայց այս ալ կատարելով յուսարանութիւն չէ: Մենք կը հաւատանք անոր, քանզի ուրիշ կերպ չենք կրնար քնել: Իրաւունք բռնած է թէ մենք պարսկնի հաւատով, ինչպէս կը հաւատանք թէ պիտոյնք արգարութիւն ընել: Ոչ ոք գրաւոր հրահանգի կամ պատճառաբանելու արդարացի կը կարծի թէ արգարութիւն գործելու է: Գիտենք թէ պարսկնի արգարութիւն գործել: Այսպէս ալ Աստուծոյ կը հաւատանք: Մեզի համար բնական է հաւատալ: Թէ դիւրըմբռնելի, թէ բնածին կամ ոչ, մենք կը հաւատանք: Ռամիկը կը հաւատայ: Աշխարհի վրայ, ամէն ազգի եւ ցեղի այրեր ու կիներ կը հաւատան: Ամէն ոք կ'ըսէ, «ՀՍԻՍՏՍՄՔ ԵՍՍՏՈՒԱԾ»:

Արդ, եթէ այս ճշմարիտ ըլլայ, եւ արդարեւ քիչեր կը տարակուսին անոր, մարդ թերահաւատիկէ առաջ, իր խղճմտանքին որոշ բնութիւն մը ընելու է, եւ ինքզինք դարձնելու է բոլոր այն ճշմարտանման պատճառաբանութեանց: Կրնայ ըլլալ որ մէկը ըսէ պարկեշտութեամբ. «Աստուծոյ նկատմամբ ասանկ պայծառաւորութիւն մը չունիմ, ոչ ալ խնայած եմ Աստուծոյ գոյութեան մասին հոգեկան յիշատակներով եւ յուզմունքներով»: Այս մասին ամբողջ ըսելիքս այս է թէ, ասանկ պարագայ մը չեմ գիտեր երբէք եւ եթէ ասանկ պարագաներ կ'ըլլան, վերջին ծայր քիչ են եւ մէջ տեղէն հետու:

Պատմութիւնը, հետախուզութիւնը, քննութիւնը, փորձառութիւնը, բոլորը միահաղոյն կ'ապացուցանեն աստուածային հաւատքի մը տիեզերականութիւնը: Կիկերոն, հռովմայեցի մեծ փիլիսոփան եւ հրապարակախօսը, կը յայտարարէ. — «Բոլոր ազգերու համաձայնութիւնը բնութեան օրէնքը կը համարուի, եւ ասոր հակառակիլ Աստուծոյ ձայնին

հակառակիլ է» Եւ այս մասին, բոլոր վէճերուն մեծագոյնը (մեծամագնուութեան գաղափարը) իրողութիւնը պէտք է համարուի: Չենք կրնար երեւակայել մարդկային վայրենի աշխարհ մը, որ արդարեւ ըլլայ սուտի մը հաւատարմութիւնը:

Տոք. R. W. Dale իր Բրիտանիական վարդապետութիւն հաստիւն մէջ կը ցուցնէ այս պարագան, զարմանալի եւ յատուկ ուժգնութեամբ: «Մեր հաւատքը Աստուծոյ գոյութեան մասին պատճառաբանութեամբ վրայ չի յենուր, ինչ որ կրնայ տեղի ունենալ քարոյի մը, բանախօսութեան մը կամ գրքի մը մէջ: Պատճառաբանութեան երկայն շղթային մէջ վերջնական եզրակացութիւն չի կայ: ամէն փառս նախապէս ապացուցուած ըլլալու է, որ մենք կարենանք անոր եզրակացութեան վստահ ըլլալ: մենք մեր վստահութեան պիտիւնք քննել սկսելէ առաջ, վրստահ եմք անոր: Եթէ մինչեւ իսկ չկրնանք խօսիլ թէ ինչպէս եւ ինչու կը հաւատանք անոր, տակաւին կը հաւատանք: Մենք կրնանք Աստուծոյ գոյութեան ապացուցներուն համեմատ ապացոյցներ քննել, եւ տրամաբանական սխալ մը բանալ անոնց ամէն մէկովը, եւ դեռ մ'ը հաւատքը անխախտ կը մնայ: մեր հաւատքը կրնայ հաստատուիլ քննութիւններով, բայց անոր վրայ չի յենուր»:

Այլ ասկայն մեր ներկայ ձեռնարկը բանականութեան եւ փորձառութեան դիմում մըն է: Մենք Փրօֆ. James Orr. DB. ի հետ կը հաւատանք, ինչպէս Ան իր «Աստուծոյ, եւ Աշխարհի Բրիտանիական Գիտնութիւնը» մեծ ճառին մէջ կը գրէ. —

«Եթէ Աստուած գոյութիւն ունի, անկարելի է որ իրերու բնութեան մէջ իր գոյութեան ապացոյցը չգտնուի, եւ ասոր համար ասանկ ապացոյցի մը հերքումը՝ իր գոյութեան հերքումին իրապէս կը հաւատարի»: Մենք կը հաւատանք թէ ասանկ ապացոյց կայ — ապացոյց՝ կենդանի, սիրող, ամենակալ, ամենակարող էակի՝ մը: Աստուած կայ, Աստուած կար, Աստուած պիտի կենայ եւ Աստուած պիտի ըլլայ այնպէս ինչպէս որ է, «Ան է բարբաձակ էակը»:

VALLANCE LOOK

Թարգմ. Յ. ԱԼՓՈՒՆԵՍՆ

Սեբասթիա

ԾԱԳՈՒՄՆ ԵՐԲԱՅԱԿԱՆ ՍԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Բ. (*)

Ս Ա Մ Ո Ի Է Լ

Մարգարեից Դպրոցները

Սամուէլ ճշմարիտ մարգարէ մըն էր. այնպիսի անձնաւորութիւն մը որ նոր չըջան մը կը բանայ, նոր թուական մը կը ստեղծէ: Եանձէի մասին իր ունեցած նախանձախնդրութիւնը(1), եւ ընդհակառակն Բանալիներու եւ Դաւաններու հանդէպ անոր ցոյց տուած այլամերժութիւնն ու արհամարհանքը, նոր ոգի մը կրցած էին ներշնչել Իսրայելի ընկճուած որդիներուն: Սամուէլ ս եւ է Իսրայէլի մը կապուած ֆոնէն մը չէր: Սելովի ուխտավայրը ոչ մէկ կերպով կը կաշկանդէր զինքը: Եանձէի զոհ մատուցանելու համար անպատճառ Տապանակին ներկայութիւնը չէր վնասեր ան: Մէկէ աւելի վայր՝ իր զոհի սեղանները կը կազմէին(2): Իբրեւ դատաւոր իր գործունէութեան չըջանալը այնքան ընդարձակ չի թուիր սակայն: Չարմանալի է որ Սաւուղ իրեն անձանթ տեսանողի մը նման կը վերաբերուի անոր հետ, առաջին անգամ չի ճանչնար զայն(3): Կարծես Բենիամինի

(*) Շար 20րդ. Թիւէն:

(1) Թէ Սամուէլ Եանձէի կրօնին բոլորանուէր փարած անձնաւորութիւն մըն էր, իր որդւոց անուններէն ալ կը յայտնուի. Յովէլ (= Որուն Աստուածը Եանձէն է), Աբիա (= Որուն հայրը Եանձէն է): Սամուէլի այս երկու որդւոց անուններուն մասին Ռընանի յայտնած տարակոյսը (H. J. T. I P. 198 No. 1) տարակուսելի կը թուի բոլորովին: Վերջապէս ուր պէտք է ծոցել Քովաւ (Դատ. 9. 11 ևն.) Յովաբամ (Դատ. 10. 5), Միբա կամ Միբահաիւ (Դատ. 10. 1) անունները, որոնք Եանձէի անունին հետ այնքան տարածուած չեն մոռնին, և կարելի էր արդեօք Եանձէի կրօնին նկատմամբ Սամուէլի ցոյց տուած նախանձախնդրութիւնն ուրանալ:

(2) Ա. Թգ. Է. 9. Թ. 12. Ժ. 8, ԺԱ. 15:

(3) Ա. Թգ. Թ. 18, 19:

կամ Յուդայի սահմաններուն մէջ այնքան ծանօթ ու հռչակուած զէմք մը չի թուիր ան, որուն համար կարելի ըլլար ըսել թէ ամբողջ Իսրայելի դատաւորը՝ կառավարիչը եղած է երկար տարիներ: Եւ սակայն հարկ է խոստովանիլ թէ՛ իբրեւ տեսանող՝ այնքան մեծ եղած է անոր գործունէութիւնը եւ այնքան ընդարձակ, որ Իսրայելի քաղաքական ու կրօնական կեանքին վրայ կրցած է խոր դրոշմ մը թողուլ, նոր ուղղութիւն մը դնել անոնց, ու նոր կեանք մը ապրեցնել: Իր առաջին տարիներուն Իսրայելի ցեղերը քաղաքական ու բարոյական տեսակէտներով բոլորովին նուաստ վիճակ մը կը ներկայացնէին: Շրջակայ ազգերուն հետ կռուներ չէին մղուեր, որովհետեւ անոնց հպատակները՝ ստրուկներն եղած էին Հրեայի: Ժողովուրդը գրեթէ պաղած՝ ու ծագած էր Եանձէի պաշտամբունքէն: Ուխտաւորութիւններ տեղի կ'ունենային, բայց կրօնական անտարբերութիւնը կը կրծէր անոր ներքը: Հեղին որդւոց յոռի ընթացքը անտարբեր աչքով կը դիտուէր կարծես: Մարգարէները ցանցաւ էին այդ տեղին: Աստուծոյ խօսքը չէր լսուեր: Ս. Դրքին բացատրութեամբ «բան Տեառն պատուական էր յաւուրսն յայնոսիկ, եւ ոչ գոյր տեսիլ որ գուշակէր(1):» Տապանակը գերի տարուած էր Փղշտացիներէն(2): Եւ կարծես ժողովուրդը հետզհետէ աւելի կը համոզուէր թէ իր Աստուածը՝ Եանձէն՝ այնքան զօրաւոր աստուած մը չէր որքան քանանական աստուածները, որքան Դաւան մը, կամ Ճանճիկ աստուած մը: Սամուէլ ազգային այս թմրութեան մէջ կենդանութեան կայծը կ'ըլլար Իսրայելի ցեղերը այլեւս հասկցած էին կարծես թէ իրենց միաբանութիւնը անհրաժեշտ էր անգործ ու բարզաւած կեանքի մը համար: Շրջակայ ազգեր, Փղշտացի, Փիւնիկեցիք, եւ այլք, իրենց իշխաններն ու թագաւորներն ունէին: Իսրայելի համար ալ անհրաժեշտ պէտք մըն էր այս: Սամուէլ

(1) Ա. Թգ. Գ. 1:

(2) Ա. Թգ. 7:

քաջ կը դգայ այս կէտը: Միեւնոյն ատեն կը դգայ թէ Եանվէի կրօնը կրնար ազգային միութեան մը կապն ըլլալ: Եւ անա Եանվէի աստուածաբետական հոյանիին սակ ծնունդ կ'առնէ Իսրայելեան թագաւորութիւնը, քաղաքական որոշ կեանքը: Սամուէլ կ'օժէ Սաւուղը, այր «անձնեայ» եւ «գորաւոր»: Գուցէ, շատ վերջերը, Սամուէլի եւ Սաւուղի միջեւ եղած բարեացակամ յարաբերութիւնը թուլցած էր: Ասոր պատճառը Սաւուղի ցոյց տուած կրօնական անտարբերութիւնը եւ կամ կրօնական ներողամտութիւնը պիտի ըլլայ(1): Ներողամտութիւն որ ա՛յնքան ազեաւորեալ եղած էր ու պիտի ըլլար, անշուշտ, Իսրայելի ազգային ու կրօնական կեանքին համար: Եանվէի կրօնը պէտք էր զերազանցապէս ազգայնանար, եթէ կարիքի է այսպէս ըսել, որպէս զի Իսրայել կարենար իր ինքնութիւնը ապահովել: Այս տեսակէտով Սամուէլի գործն ու դերը շատ նշանակալից եղած էր:

Բայց Սամուէլի ամէնէն նշանակելի գործը մարգարէութեան նոր զարկ մը, նոր ոգեւորութիւն մը տալն եղած է: Եանվէի կրօնը, առանց մարգարէութեան, չպիտի կրնար տիրապետել Քանանու երկրին մէջ, Թագաւորական գաւազան մը կամ իշխանութիւն մը, մանաւանդ երբ Սաւուղի նման մէկու մը ձեռքը կը գտնուի ան, չէր կրնար երաշխաւորութիւն մ'ըլլալ Եանվէի պաշտամունքին տեւականութեան: Քանանական ծիսականարութիւն մը, երբ Հեղիի եւ Սամուէլի որդւոց նման անձերու ձեռքը կը գտնուէր ան, Եանվէի կրօնին անկումը պիտի դարձնէին աւելի քան անոր բարձրացումը, ազգայնացումը: Իսրայելի տեսանողները միայն կրնային փրկել զայն: Եւ Սամուէլ, ինքնին անտանող մը, կրցած ու զիտցած էր նոր կազմակերպութիւն մը տալ մարգարէութեան, ճշմարիտ հիմնադիրը

եղած էր «Մարգարէական զպրօցներուն»:

Արգարեւ մարգարէութիւնը կար եւ գոյութիւն ունէր արդէն Սամուէլէն ալ շատ առաջ: Թերեւս «մարգարէական զպրօց»ներու նախագիծերն ու տարբեր Սամուէլի համար կամ անկէջ ալ առաջ երեւան եկած էին արդէն: Կեանքի մը սկիզբը միշտ աննշան ու անշմարելի ըլիջ մըն է, որ կենսական տարրը կը պարունակէ իր մէջ: Սամուէլի զարգացումը մարգարէական այս հաստատութիւնները, ուրիմ, եթէ չունէին իննորորդ կամ ութերորդ դարերու մէջ ծաղկած մարգարէական կազմակերպութեան մը զարգացումը, դէթ ըլիջային կազմութեան մը առաջին զխմայեղութիւններէն անցած՝ բարձրացած էին ապահովարար:

Ինչ էին, սակայն, այս դպրոցներն իրապէս: Կրնային արգարացնել արդեօք իրենց անունը: Վանական կարգեր էին, թէ՛ իրենց ծագումին համեմատ ուսումնական հաստատութիւններ Յուսիլ է որ անոնց մասին մեր ունեցած ծանօթութիւնները շատ հատակոտոր են ու թերի. եւ սակայն մեր օրինաւոր հետաքրքրութիւնը գոհացնելու աստիճան ստալձնելը կը գտնուին անոնց մէջ, որոնցմէ Թերեւս կարելի ըլլայ մարգարէական այդ չէնքին ուրուալիծը ներկայացնել: Ամէնէն առաջ հարկ է կանխել, ըսելու համար թէ Թերայիի անագաւաններուն մէջ ու Քանուգէսի ափերուն մօտ հիմնուած վանական հաստատութեանց չէին նմաներ մարգարէական այս դպրոցները: Մենաստաններ՝ կուսանոցներ կամ ճգնարաններ չէին անոնք: Ամուրի վանականներու կամ պիլշուններու չէին նմաներ ոչ մէկ կերպով: Ամուսնութիւնն արգիւտած չէր անոնց համար(1): Եսաի կին մ'աւելր որ մարգարէութեան կ'անուանուի(2): Բայց մարգարէական խումբերու (պար) կամ միաբանութեանց մէջ կը թուի թէ իրական սեռ մուտք եւ գոյութիւն չունէր քնաւ, մանաւանդ Եղիայի եւ Եղիօէի շրջաններ:

(1) Թէ Սաւուղ Եանվէի բողոքանքէր փարած անէ մը չէր, ոչ միայն անոր մասին գրուած պատմական հաստատները կը ցուցնեն, այլ և իր որդւոց անունները որոնց մասին վերը գրեցինք արդէն (Յանաւ Թ/ւ 20, էջ 318:)

(1) Ա. Թ. Բ. 1: Գ. Թ. Ժ. 11 և Դ. Թ. Գ. 1 և Դ.

(2) Ես. Բ. 3:

բռնել Այս վերջին երկու մարգարէներն
ամուսնացած չէին երբէք: Եւ կ'արժէ
ուշադրութեան առնել թէ Նդիսէի հիւ-
րընկալ կ'ընէ ի'նչ վերապահումներով եւ
ամենածուրեւումը կը խօսի անոր հետ: Գլխ-
դիւ միջոցաւ կը խօսակցի ան. չի համար-
ձակիր ոչ ներս մտնել, եւ ոչ ալ ներկա-
յանալ անոր առջեւ. եւ եթէ իր վշտին
ծանրութեան տակ Նդիսէի ոտքերուն կը
փարի, Դէհզի կ'արգիլէ զայն(3):

ԳԵՈՐԳ-ՄԵՍՈՈՊ

(Շարունակելի)

ՄՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

Քրիստոսի հրաշափառ Ս. Յարութեան եւ
Հոգւոյն Սրբոյ Գալուսեան անօրինական օրե-
րէն ետքը. որոնք կը վերջանան այսօր,
Շր. 4 յունիս, Հայ եկեղեցին կը սկսի ամա-
կատարութեան շարքը, առաջին մէկ քանի
շաբաթները նուիրելով յիշատակին ա'ն
սուրբերուն եւ սրբութիւններուն, որոնց անմի
զոհաբերութիւնը սերտ կապ ունի Հայ Ս.
եկեղեցւոյ հիմնարկութեան պարագաներուն
հետ: Հռիփսիմեանք, Գալիանեանք, իրենց
նախատակութեան սրտայոյզ գրուագներովը
ոգևորած են հայ սրբազան երգիչները, եւ
ամէնէն քաղցր էջերը ներշնչած են հայ
սրբազան բանաստեղծներուն: Ահա՛ այդպիսի
սրտագրաւ էջ մըն է հոգեւոյն Սրբանմ-
տեանց Գարեգին եպ.ի հետեւեալ նկարագ-
րութիւնը, որ շատ ի դէպ կուգայ Ցախարի
այս Թիւի խմբագրական էջին մէջ իսկ ԳԱԶ-
ՐԻԿԻ կողմէ՛ այդ անուշ յիշատակութիւննե-
րուն նուիրուած գեղեցիկ գրութեան. —

ՍՐԲՈՑ ՀՈՒՓՍԻՄԵԱՆՑ ՏՕՆ

Ի ՍՈՒՐԲ ԷԶՄԱԾԻՆ

Զանգակները կը հնչեն քաղցր ներ-
դաշնակութեամբ. երկարօրէն կը հնչեն
ինն ձայն զանգակաց:

Արձագանքը կը բարձրանայ զանգա-
կառան գմբէթը, եւ կ'անդրադառնայ
խորանին կամարները: Կամարներէն ի վեր
կը ծառալի արձագանքն ընդարձակ հո-
րիզոնին մէջ, Վաղարշապատին, շրջապա-

տին, անտառին, այգեաց, հրապարա-
կին:

Կը սկսին շարժիլ թռչունք, որ թե-
ւածալիկ երամ երամ կը սպասէին, ծառոց
թաւերէն, կտուրներէն, եկեղեցւոյ տանի-
քէն, գմբէթաց եզերքներէն: Վարժուած
էին. կը խառնէին իրենց այլայլիկ ձայ-
նիկը զանգակաց զողանջին:

Ընդհանուր շարժումն կը սկսի: Ուխ-
տաւորք կը հաւաքուին մեծ բակը, խառ-
նիսուռն, գոյնդգոյն իրենց տարազներով.
գունդագունդ, սեռով, սերնդով, հասակով,
գեղով, ալեւորն ու մանկտին, աղամարդն
ու մատղաշ աղջիկը, մայրն ու այրը, գի-
տունն ու ռամիկը, դաշտի դաւակն ու
քաղքի պարոնը, ամենքն Հայ, ջերմագին
եռանդով լի: Կը շարժին ալէծուփ, կը
մրմնջեն, եւ իրենց ձայն իբրեւ ձայն ըն-
թացից ջուրց: Զովագին կը շնչէ հովիկն
պաւառտուն, շարիշար կ'երեւին դասք քա-
հանայից, կը ծածանին վեղարք արեղա-
յից, կը խշխշան ծաղկեայ վերարկուք
սրբազանից: Թափօրը կը կազմուի:

Սարկաւագունք, դպիրք եւ հարիւրա-
ւորք ճեմարանին երգարան ի ձեռին: Կը
հնչեն զանգակներ միեւնոյն քաղցրաձայ-
նութեամբ, եւ ճեմարանականք կ'երգեն
մեղմագին «Անձինք նուիրեալք սիրոյն
Քրիստոսի . . . » Կոմիտաս կաթողիկոսի
հոգեւտաւիղ տաղն ու քնարը:

Կ'ընթանայ թափօրն շքեղ հանդիսա-
ւորութեամբ, անցնելով Տրդատայ դռնէն,
Վեհարանի հովանեաց ներքեւէն, Վաղար-
շապատի հրապարակէն, ճեմարանի հոյա-
կապ ճակատուն առջեւէն, պարտիզի քո-
վէն, մեծ պողոտայէն մտնելով դաշտի
ընդարձակութեան մէջ: Զանգակները կը
հնչուին, շարականք կ'երգուի, «Բարբառք
երկնաւորք լցին զերկիր», . . . Թափօրը
կը ստուարանայ հետզհետէ: Այգեգործն,
հնձողն, ջրուորն, նախորդն, հովիւն,
գառնարածն, իրենց լաճերն ու աղջիկ-
ները միասին կայնած, խորին երկիւղա-
ծութեամբ կը խաչակնքեն, գտակները
բացած, զմայլած թափօրին կը նային.
կրօնից, հաւատալեաց, երգելեաց տպա-
ւորութեան տակ, եւ որոջք եւ գառինք

(3) Դ. Թգ. Դ. 27 ևն:

իրենց քաղցր աչքերը յառած կը բառա-
չեն ու կը մային: Կ'ընթանայ թափօրն:

Հնձաններուն մօտ ենք: Ահա Շո-
ղակաթ. վանքն ու տաճարն: Իւր շուրջ
կանանչաթուփ այգեստանք, դալարաւետ
մարդ, եւ հասկաթուռ արտորայք: Օրհ-
նութիւն երկրին, գեղեցկութիւն հով-
տին, եւ մարդն քանի՜ գեղեցիկ ի մէջ
այնքան պարարտութեանց եւ գեղոց: Աստ
հաստատուած էր չքնադագեղն Հռիփսիմէ՝
երեսուն եւ եօթն չքնադ եւ սուրբ կոյո
ընկերօք. ա՛ստ երկնային ողկոյն ի մէջ
ողկուզաց որթոց. աստի «Հոտ անուշից
բուրեցան ի քրիստոս . . .»:

Կը յառաջէ թափօրն: Միշտ այգես-
տանք, միշտ արտորայք մեր շուրջն ու
առաջ, եւ անդէոց ու խաչանց երամակք,
եւ ի ձայն, եւ ի փայլ, եւ ի կերպս զա-
նազան հաւք թռուցեալք: Արդարեւ
«Սքեմ Աստուածատունկ զարդարեալ . . .»:
Յափշտակութիւն յանկարծ. հիացումն.
«Զօրք հրեշտակաց ընդ մարդկան . . .»
եւ կանայք ի յերկինս զինաւորք . . . Էնն
Աստուած ամենագոր զօրութեամբ խոնար-
հեալ տեսանէր զհանգէս կուսանացն . . .»:

Հասած ենք հանդիսավայրն: Ահա՛
ասպարէզ նահատակ կուսին. հսկայակերտ
վկայաբանն Սրբոյն Հռիփսիմեայ: Հոյա-
կապ գմբէթն արձակեց իւր ցնծութեան
նշանն. հնչեցին զանգակներ տաճարին,
սխրագին ոգեւորութեամբ թափօրն մտաւ
ի տաճարն. եւ բոլորեցաւ Կոմիտասոյ
շիրիմին շուրջն: Անդ լուսին երգողք.
բայց մի սխրալի եղանակ լսելի կը լինէր
դեռ ընդ երկար. արձագանգն էր տաճա-
րին, արձագանգ քնարերգակ ոսկերոց
սուրբ կաթողիկոսին:

Եւ սկսան պատարապը: Գուրաք մատաղ-
ներ կը զենուն. ազադակ խա անց: Ներսը
բուրումն ինկոց, եղանակք դպրաց. «Քրիս-
տոս պատարապեալ ի միջի մերում», Ալէ-
լուիա:»

Բայց ո՛ւր է սուրբ կոյն . . . :

Աւագ սեղանոյն տակ դուռ մը կայ
բացուած. ներս կը մտնեմ ի խոր, խոնաւ,
անձուկ անքէ մը ներս, յաջակողմն ի
ներքոյ սեղանոյն, անուշահոտութեամբ լի

վայր, դամբարան մը կայ լուսավթաթի,
խնկաւէտիկ, եւ երեք սրբաւնեալ անձինք,
Ս. Լուսաւորիչ, Ս. Սահակ Պաշխեալ եւ Ս.
Կոմիտաս կը սպասաւորեն անդ, հսկելով
իրենց կնքեալ գանձուն: Անդ, այդ մթն-
շաղին մէջ կը փայլի լուսեղէն թագուհին,
Ս. Հռիփսիմէն: Կ'երկրպագեմ: Ինկած
եմ հողոյն վրայ, փարած եմ շիրիմին . . .
Թողէ՛ք զիս այստեղ:

ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆԵ ԳԱՐԵԿԻՆ ԵՊՍ.

ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՄՈՒՍԵԱԿԱՆ ՕՐԷՆՔԻՆ

Առջն Քրիստոնէական Եկեղեցի ինչպէս
իւր Աստուածաբանութիւնը, նոյնպէս իւր
Եկեղեցւոյ իրաւագիտութիւնը ունի: Ա-
մուսնալուծութեան արդի պահանջներուն
հանդէպ՝ իրրեւ լուսաբանութիւն՝ կարեւոր
կը համարինք ճշտել սա արմատական
կէտը թէ Հայ Առաքելական, Եկեղեցւոյ հո-
մար Ամուսնութեան Օրէնքը անլուծելիու-
թիւնն է, իսկ ամուսնութեանց լուծանե-
լութիւնը օրէնք չէ, այլ ի հարկին կա-
տարուած բացառութիւն մը՝ միմիայն Ե-
կեղեցական Իշխանութեան կողմէ. այս
պարագային Եկեղեցական Իշխանութիւնը
երդուեալ դատաւորներու (jurg) դեր կը
կատարէ:

Կրօնական Իշխանութիւնը ամուսնու-
լուծման վճիռ կուտայ ոչ իրրեւ օրէնք,
այլ իրրեւ արտօնութիւն, զարտուղութիւն,
բացառութիւն: Այսպէս, ամուսնալու-
ծում կ'ըլլայ մեր մէջ քաջառնաբան իշ-
խանութեանը. այնպէս որ միեւնոյն հան-
գամանքներու տակ ներկայացող երկու
ամուսնական խնդրոց պարագային, մէ-
կուն ամուսնալուծում կ'ըլլայ, իսկ միւ-
սին՝ ոչ. եւ այս՝ կախում ունի կշռադա-
տութեան եղանակէն:

Հետեւաբար ամուսնալուծման օրէնք
չի դրուիր ինչպէս հրապարակաւ կը բաղ-
ձան քանի մը փաստաբաններ եւ հո՛ն
իսկ այս խնդիրը կ'ուզեն հանել Ազգ. Ընդհ.
Ժողովոյ առջին:

ՏԻՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ

29 Մայիս 1911

Ի Ր Ի Կ Ո Ի Ա Ն Ա Ղ Օ Թ Ք

Անժեղուտը կը բերէ դաւնուրիւն մը նուազի .
 Ու հոգեցունց քրքումներ որոնք սրտիս կը խօսին .
 Ուր հոգեքը կը դադրին ու խռովքը կը ցամփի
 Երբ երազին ոսկեհիւս պարիկներն ալ կը խռսին :

Թռչունները կը քողուն իրենց երգն ու մեղեդին .
 Ծաղիկներուն քերթերն ալ վերջին բոյր մը կը քափեն .
 Դեռ կ'երազեմ այն վայրերն ուր սոսերներն կը ցնդին
 Ուր հովիկը կը խայտայ. ալիւսներն ալ կը ծափեն :

Պաշտամունքի ժամերուն զգացումը կը վազէ .
 Մեղեդի մը հնչելու ուխտաւորի հոգւոյս մէջ .
 Երանութեան ջահն ոսկի իր շողերով լուսապերն

Երբ կը վառի, կը փայլի. պատմամբ հը կամ երա՞զ է .
 Որ իմ հրգիս կը դիւրէ. միշտ փրկուան հեռ սպանուն
 Ներանձնացած կ'ալօթեմ աչքերս փակ ու խոհուն :

ԴՊՐԵՎԱՆՔՑԻ

ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՐՀԻ ՄԵԾՄԳՈՑՆ ԽՈՐՀՈՂՆԵՐԻ

Կ Ն Ա Ն Ք Է

Կեանքի նպատակը բարոյական է ոչ
 թէ անամուսական :

* Կեանքն այն ատեն լաւ է, երբ
 պաշտականութեան կիրառման մարտը
 գիտակցութեամբն օժտեալ է :

** Կեանքի մէջ մեր հետեւեկը կարեւոր
 բազմազանութեամբ մեր հոգեւոր բարեփոխումն
 է, կամ թէ ուրիշ կերպով բացատրենք,
 բարոյական հաւատարմական մեր կա-
 ռոզութեանց յառաջդիմութիւնն է, որ օրի
 մեր միտքը պայծառացնել, օր օրի աւելի
 ազատ ու լաւագոյն դրալ :

* Կեանքը ոչ հաճոյք մ'է եւ ոչ վիշտ
 մը, այլ ծանր դժուար մը որով բնականաբար-

ուած ենք եւ զոր պէտք է ի կատար ա-
 ծենք ի պատիւ մեզ :

* Կեանքը ոչ ամեն օր մ'է եւ ոչ
 սուգի, աշխատութեան օր մ'է այն :

* Կեանքը միայն մէկ վայրկեան է,
 բայց այս վայրկեանը կը բաւէ յաւիտե-
 նական գործերու ձեռնամուխ ըլլալու :
 Մենք յանցաւոր ենք, իր չունեցած բանը,
 այսինքն տ'ի սղութիւնն իրմէ ուղեղնուս
 համար, բայց ցորչափ մեզ թողաւորութեամբ
 է հաւատալ որ անիկա պիտի տեսնէ, կը
 խորհինք, կը գործենք, կը սիրենք, եւ այս
 ամենը կեանքն է :

* Շատ ապրող մարդը նա չէ որ շատ
 տարիներ համբեց, այլ նա որ շատ զգաց
 կեանքը :

* Չաւարտներ մեր կեանքը առանց
 ապրած ըլլալու, առանց մեզմէ բան մը
 աւելցուցած ըլլալու իբրեւ համարու պա-
 չար մեզմէ վերջը դալիք սիրուններ, քիչ

մը աւելի ողջմտութիւն, աւելի յարգանք արդարութեան եւ ճշմարտութեան, քիչ մը աւելի կորով եւ բարոյական ոյժ, քիչ մը աւելի բարութիւն եւ գթութիւն:

Ն. Ապրող մարդիկ նոքա են որք կը պայքարին, նոքա որոնց հոգին եւ ճակատը կը լեցուն հաստատ ծրագրով. նոքա որք բարձր կեանքով մը գիտակ դադարմէն ի վեր կը մտաւորին, նոքա որք մտածկոտ կը քաշեն վսեմ նպատակով մը բռնկած, աչքի առջեւ ունենալով անդադար դիպեր ցերեկ սուր աշխատութիւն մը կամ մեծ սէր մը. նոքա որոց սիրտը բարի է եւ որոց օրերն են ասլոցեալ. նոքա են որք կ'ապրին իսկ միւսները կը մեղքնամ, Աստուած իմ, վասն զի ոչնչութիւնն իր մոռյլ ձանձրոյթով կը գինովցնէ, վասն զի ծայրագոյն բուր, առանց ազդեցութեան պահելն է, անօգուտ, ցիրցան, առանց մտածելու, այս աշխարհի մէջ գոյութեան մոռյլ տառապանքը քարշ առնով:

Ն. Ապրելը՝ գիտնալ, յուսալ, սիրել է, սքանչանալ, բարեբարել է, շատ ապրեցանա որ իր մտքով, սրտով եւ իր գործերով պաշտեց կեանքը:

Ն. Մարդս ա՛յնքան կը իրէ ապրի որ կ'ուզէ երկու անգամ ապրիլ. կեանքի այս սէրէն կը ծնի անմահութիւնը:

Ն. Կեանքը կը սահի մէկ բալէի մէջ, նա ինքնին լսան մը չէ, իր տրեքը կախուած է նորա կիրառումէն, ասիկայ այն միակ բարիքն է որ սիրտի մեայ եւ ասոր շնորհիւ է որ բան մը կ'արժէ կեանքը:

Ն. Մարդն իր մէջ երկու կեանք ունի. աստիճանն անդիտակից, անասնական կեանքն է, մէկ խօսքով այն կեանքը որ զինքը կ'ապրեցնէ. իսկ միւսը կամայական, գործոն կեանքն է. կեանքը զոր կ'ապրի Որպէս զի կարենայ երջանիկ լինիլ, պէտք է որ կատարեալ ներդաշնակութիւն մը գոյանայ այս երկու կեանքերու մէջ: Լինելը ապրիլ է, եւ ապրիլը խոկալ եւ կամիլ է:

Ն. Կեանքի մէջ իւրաքանչիւր քայլ հեռացածկեր մ'է մեզ համար որ կը պարզուի մարդկութեան սրտին մէջ:

ապրիլը հասկնալ է նա. հասկնալը ոչ միայն ներել է այլ եւ սիրել: Բաց աստի այս սէրը դուրս չի ձգեր ոչ յստակատեսութիւնն, ոչ ջանքը բարեաքելու եւ կաշմակերպելու համար. ընդհակառակն իրապէս գործոն սէրը պէտք է ամէն բանի առաջ փափաք մը ըլլայ փոխակերպութեան եւ յառաջդիմութեան: Սիրել էակ մը, հաւատալիք մը, այս կը նշանակէ ջանալ բարձրացնել զանոնք:

Ն. Կեանքի կապուիլը եւ նոյն իսկ երջանիկ կեանքի մը կապուիլը լնութեանն մեզ ներշնչած է. բարոյական իսկ չի գտապարտեր զայն. հեղիք է որ իր արժան եղած կարգը գտաւորել դիմանա մարդիկ:

Ն. Ով որ կ'ապրի առանց նպատակի եւ ըստ զիպաց, ասոր կ'ապրի. բարոյական կեանքի մէջ հաճոյք վայելելու համար պէտք է մարդ նպատակ մը ընտրէ եւ անոր հասնելու աշխատի:


Ն. Լաւագոյն կերպով գլուխ հանուած կեանքը անիկայ չէ, որուն մէջ մարդ մը շատ հաճոյք, շատ սրտ, շատ կարողութիւն, սրտիւ կամ համբաւ կը հայթայթէ իրեն, այլ անիկայ, որուն մէջ մարդ մը աւելի մարդ կ'ըլլայ եւ օգտակար աշխատութեանց եւ մարդկային պատկանութեանց մեծագոյն չափը կը կատարէ:

Ն. Մասնութիւնն ասանց բանաստեղծութեան եւ կեանքն ասանց անհունի, զաշտանկար մ'է ասանց երկինքի:

Ն. Կեանքը, կրակի նման հաղորդակցութեամբ կը պահպանուի: Ասիկայ հիմնական օրէնքին մէջ կը կայանայ զոր կենսաբանութիւնը առաւ մեզ, կեանքը լոկ անդառնութիւն չէ, այլ արդիւնաբերութիւն եւ պաշարներութիւն է: Ապրիլը տեղի միտել է քան թէ ստանալ:

Հասարակ է. ԿԱՁ

Բաղեց ԽԱՁԻՍԱՐ



**ՀԱՅ ԵՒ ԲՈՂՈՔԱԿԱՆ
ՀԱՍՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՅ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ**

Մարաշ Կիլիկիոյ հին քաղաքներէն մին է. 30,300 բնակչութեան 12,000ը Լուս. 4,800ը Բող. և 4,000ը Կաթոլիկ են. մօտակայ Գրնուզ, Զէյթուն եւ շրջակայ գաւառներու եւ գիւղերու մէջ կը գլտնուին 30,000է աւելի Հայեր: Այս հաշուով Մարաշ 50,000է աւելի Հայերու կրթութեան կեդրոնը կրնայ համարուիլ: Քաղաքին մէջ կը բնակին 30,000, իսկ շրջակայ գաւառներու մէջ 20,000 թուրք, բուլղ. և չէրքէզ իսլամներ:

Մարաշէն՝ առաջին կոտորածին սպաննուեցան 100 Հայեր. իսկ Կիլիկիոյ ջարդին, ընդհանրապէս ճամբաներու վրայ և այլուր, զոհուեցան 800 Հայեր: Այս 1900 նահատակներու թողուցած այրիներու և որբերու թշուառութիւնը կրթաւով սաստկացած է:

Մարաշ ի վաղուց անտի կրթութեան գործին ջանագիր ըլլալով, այսօր ամբողջ հայ համայնքը ունի 19 ուսուցիչ, 50 վարժուհի, և 3,356 երկսեռ ուսանող, որոնց համար կը ծախսէ տարեկան իբր 900 Օսմ. ոսկի:

Ցարդ Լուս. և Բողոք. հայ ժողովուրդներ իրենց առանձին բարձր վարժարաններ կը պահէին թէև, բայց երկու համայնքներ ալ այս դպրոցները պատ գտտ պէտք եղած մակարդակին հասցնելու նիւթապէս անկարող գտնուելով, միացեալ բարձրագոյն կեդր. վարժարան մը ունենալու անհրաժեշտութիւնը զգացին, և դպրոցական տարւոյ սկիզբը երկուստեք վաւերացուած նոր ծրագրով մը համաձայնելով բացին Միացեալ Կեդր. Բարձրագոյն վարժարան մը, որ կրնար գոյութիւն ունենալ միայն սոյն երկու հատուածներու միութեամբը:

Միացեալ Կեդր. վարժարանին պայմանները մէկ տարուան համար են, և կրթական խորհուրդը կազմուած է երկու քահանայէ, երկու բողոք. երկէք, երեք

աշխուրէ, և երկու պատուաւոր անձերէ:

Նպատակն է սոյն վարժարանին մէջ մեր երիտասարդներուն տոհմային և քրիստոնէական (կրօնական) բարձր և աւողջ կրթութիւն աւանդելով պատրաստել զանոնք ճշմարիտ մարդ՝ Ազգին, Եկեղեցիին և Հայրենիքին համար:

Դպրոցի ըջանը սահմանուած է 6 տարի, յորում տղաք պիտի ուսանին Հայ. թուրք. Անգլ. և ֆրանս. լեզուներ և դիտութիւնները, այն աստիճան որ շրջանաւարտները կարենան պէտք եղած դիտութիւններն ունենալ գործի աշխարհի մէջ, և եթէ գոլէճներ երթան, կարենան մտնել երրորդ դասարան, կամ կառավարական վարժարաններ առանց դժուարութեան:

Ըստ մեր ծրագրին, դպրոցին բարոյականը միշտ բարձր աստիճանի վրայ պահելու համար, անհաւատութեան եւ անբարոյականութեան ո՛ր և է յանցանք աններելի է: Աստուածաշունչ մատնանք պիտի դասախօսուի դպրոցի բոլոր կարգերուն, և դաւանական վիճաբանութեանց ասպարէզ չտրուելու համար՝ միայն պիտի շեշտուի քրիստոնէական սէրը: Ուրախ ենք յայտարարել թէ անցեալ վեց ամսուան մէջ ինչպէս կրթական խորհուրդին, նոյնպէս ուսուցչական մարմնոյն ու աշակերտներու մէջ կատարեալ սէր և համերաշխութիւն մը տիրած ըլլալով բնաւ դժուարութիւն ծագած չէ:

Դպրոցը բաց է նաեւ թուրք. ֆուրդ, Չէրքէզ և ամէն ցեղէ ու կրօնէ ուսանողներու առջև:

Վարժարանս այս տարի 300 ոսկի պիւտժէով ունի 7 ուսուցիչ և 216 ուսանող (104 Լուս, 112) Բող. 9 Կաթ. Հայեր, և 3 ֆուրդ աշակերտ), մինչ անցեալ տարի երկու համայնքներուն առանձին բարձր վարժարաններուն մէջ կը յաճախէին 168 աշակերտ: Քաղաքիս կառավարական բարձր վարժարանը կը յաճախեն 82 Հայեր: Վըստ ուհ ենք որ երբ յաջողինք մեր ծրագիրը լիովին գործադրել, մեր աշակերտաց թիւը 200է շատ աւելի պիտի ըլլայ. սակայն որպէս զի կարենանք հասնիլ այդ

յաջողութեան, յառաջիկայ տարիին համար պէտք ունինք 500 ոսկի գրամի. սոյն դումարին 300ը կարելի է հայթայթել թոշակներու և քաղաքիս բարեօրէն անձնութեան նուէրներէն, իսկ պակասած 200 ոսկին կը սպասենք անդաւազներ և մարդասէր անհատներէ և մարմիններէ:

Ներկայիս մեր դպրոցն է գետնայարկ, փոնաւ, մութ, խորտուշ և հակառոշական շէնք մը: Մինչ կեդր. Միացեալ վարժարանիս համար ամենէն չափաւոր յատակագծով վայելուչ շէնքի մը և կահաւորութիւն համար անհրաժեշտ է 5,000 ոսկի:

Տեղւոյս Լուս. և Բողբ. հասարակութիւնք իրենց անօրինակ աղքատութեամբ հանդերձ՝ յիշուած գումարին 1000 ոսկին խոստացած են: Արդարեւ այս իսկ անհաւատալի յոժարութիւն մըն է՝ որ սակայն միութեան ջերմագին խանդէն կ'նար բխիլ:

Լիայոյս ենք որ, այսպիսի ցանկալի միութիւն մը և անոր յարատեւութեան ու աճման օրհնաբեր արդիւնաւորութեան յայտնի բարեբները պիտի խանդավառեն սիրտէրը բոլոր մեր համարիւն եղբայրներուն և քոյրերուն: Եւ քրիստոնէայ աշխարհի մարդասէր վեհաձայն բարերարները ալ ուրախութեամբ պիտի դիտեն նահատակ բայց պառակտուած ազգի մը մէջ սկսուած այս բերկրաւիթ շարժումը, կրթական յարկի մը ներքեւ միութեան սա օրինակելի ձեռնարկը:

Այսպիսի զգացումներով տոգորուած, աշխ. հոգիներէ կը խնդրենք իրենց նիւթական լիարուսն աջակցութեամբ ամրապնդել մեր միութեան կապը, որ կը խոստանայ լոյս և զարգացում տարածել կիլիկիոյ աս բազմահայ մութ անկիւնին մէջ:

Ի Դիմաց Կրթական Խորհրդոյ

Նախագահ

Սահակ ԲՆ. Տ. Պետրոսեան

Ասեմապետ

Կ. Յ. Յարութիւնեան

Ասեմ սղալի

Հմայեան ԲՆ. Վարժապետեան

ՀԱՅ ԿԻՆԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ

Ամերիկայի Հայ դպրութիւն մէջ, այս ևս այն կողմ պատահած ողորակումներու հետ մէկտեղ, — որ դժբաղդաբար անխուսափելի դարձած են Հայ Կեանքին մէջ, — կ'երեւի եռանդուն գործունէութիւն մը՝ օգտակար ըլլալու Մայր-Հայրենիքին: Հայ կիւնն ալ ունի իր կարեւոր դերը այդ մասին, եւ գոհութեամբ կը հրատարակենք հետեւեալ կոչը միութեան, զոր խումբ մը Հայուհիներ փափաքած են հրատարակուած տեսնել Տաճարին մէջ, որուն հաստարար ընթերցում հիներն են: Անկեղծօրէն կը միացնենք մեր ձայնը՝ իրենց ազգօգուտ հրաւերին:—

Կ Ա Ձ Ե Ի Դ Ի Մ Ո Ւ Մ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՆԱՆՑ

Հայրենակցութիւնը,

Այս վաքրիկ դիմումով. Նիւ. Եօքսթընակ խումբ մը Հայուհիներ, Ձեզ կը դիմենք. Միացեալ Նահանգներու եւ Քանադայի մէջ բնակող տարագիր Հայ Տիկիւններ եւ Օրիորդներ, եւ յոյս ունինք որ դուք անկեղծ ուշադրութեամբ եւ րարութեամբ արձագանգ կ'ըլլաք այս խօսքերուն:

Սահմանադրական ազատութենէն յետոյ, միւս, ամերիկական Հայուհիներ, խանդավառուելով հանդերձ մեր Հայրենիքի սուստութեամբ, նոր եւ լուրջ ձեռնարկ մը ջրլինք ծառայելու թէ՛ մեր ժողովուրդին եւ թէ՛ յատկապէս բարձրացմանը Հայ Կնոջ Հասարակական գործերու մէջ: Շարունակուեցաւ աննշան րացառութեամբ, նախկին եղանակը գործելու. նոյն Որբախմումները, նոյն Աղքատախմումները, նոյն Նպաստամատոյցները բաժան բաժան, ամեն մի քաղաք իր համար, առանց ընդհանուր կապի: Կարծէք հիմա ալ, ուրիշ բան չկայ բայց եթէ շարունակել ինչ վերքերու խմումքը ինչ ձեռով եւ եղանակով:

Ժամանակ է, կը կարծենք, եղած ընկերութիւններուն օգտակարութիւնը ճանաչելով հանդերձ, նոր շարժում մը մտցնել այս մեծ Գաղութի իգական սեւի մէջ, որ ապրելով ազատ երկրի լուսագոյն պայմաններու տակ, անխուսափելի պարտականութիւն մը ունի հոգալ հայրենի երկրի ծոցը՝ օգիտութեան մէջ ընկղմած Հայ Կնոջ բարձրացումի մասին, ջանալով ուղարկել այնտեղ Ամերիկեան եղանակով պատրաստուած վարժուիչներ, Ամերիկեան գրականութենէն Թարգմանուած գրքոյկներ սալ Հայ Կնոջ ըն-

ձեռքանութեան համար, ձգտել ծանօթացնել Ամերիկացիներու, կապուածին ու գործունէութիւնը երկրի Հայոցիներուն, փոխադարձաբար, այդ բոլորին հետ միասին ներշնչել Գաղութներու Հայոցիներուն՝ իրենց պարտաւորութիւններուն այս նոր եւ լրջամիտ Գիտակցութիւնը:

Ընելիք շատ կայ եւ պահանջն ալ շատ մեծ է, այդ բոլորին համար հարկաւոր է ամենէն առաջ յարարելու ձեռք մէջ դնել ալ եւ այլ քաղաքներու Հայոցիները, կապ հաստատելով անոնց մէջ, առաջ ընել մտքի եւ կարծիքներու փոխանակութիւն, պարտաւորութիւններուն ապարէզ եւ դիւրութիւն տալ, որպէսզի ամենք իրրեւ խօսող, ամենք իրրեւ կազմակերպող, ամենն հանրային աշխատանքի մէջ, եւ այդպէսով դուրս բերն չեզոքացումէ՝ այն հարիւրաւոր Հայ կիները, որոնք մէկու Ամերիկա կապրին բաց զուրկ են ընկերակամութենէ, հանրային գործէ եւ ինքնազարգացումէ:

Հայրենակցութիւնը,

Այդ նպատակով է ահա որ՝ ներկայ կոչով, կը դիմենք Ձեզ: Կը խնդրենք որ ամեն մի քաղաքի մէջ մեր ձեռնահաս սեռակիցները կազմակերպէին կանանց ժողովներ անխափր բոլոր կուսակցութիւններէ եւ կրօնական դասանաբներէ, որպէսզի այդ ժողովներու մէջ քննուէր եւ որոշուէր թէ ինչ կրնան ընել Ամերիկացի Հայոցիները, եւ որոնք են այսօրուան անկեղծագելի եւ հրամայական ձեռնարկները յօգուտ երկրորդական Հայ ժողովուրդի եւ իգական սեռի:

Ներկայիս հրապարակի վրայ դրուած է Ազատութեան կորոյի խնդիրը: Մենք հրապարակ կը բերենք երկրի համար համաստեղութիւնով Վարժակիցներ պատրաստելու հարցը, Առաջարկ կայ կարօտ Հայ գիտելու, ի կեղ շարժական գրադարաններ: Վերջին օրերս հարց յարուցուեցաւ Ամերիկացիական Հայ ուսանողներու եւ ուսանողուհիներուն օգնելու մասին: Յանկուտիւն կայ Պոլսոյ Առաջնական միջոցաւ Նոր աւստրալիական հոգներ հիմնել երկրի մէջ կան ուրիշ ծրագիրներ եւս, որոնց յիշատակումը անպակաս կը թողունք:

Եւ անդ, կամք եւ կապակցութիւն հարկաւոր է այս հանրագումար գործերը սկսելու եւ իրականացնելու համար: Եւ անդն ու կամքը, յարգելի Հայրենակցութիւնը, Ձեզ քի պակսիր անկասկած: Մեզ բոլորիս կը պակսի Կապակցութիւնը Հայ յուսիներուն մէջ, այն շաղկապը, որ պիտի հանդիմանայ իրրեւ միացնող, մերձեցնող ոյժ լայնածաւալ գաղութներու, ցրուած Հայ կիներու միջեւ:

Այս կոչը ընող կանանց խումբը, վստահ Ձեր համակրութեան վրայ, Նախաձեռնութիւն յանձն առաւ, առաջարկել եւ հիմնադրել Ամերիկայի Հայրենակցութիւնը կապակցութիւնը, իբե

րեւ, միջոց մէկտեղ բերելու, ցրուած ոյժերը եւ այդ շաղկապով ծառայեցնելու Գաղութի իգական սեռը այն մեծ կարիքներուն եւ ցարեւուն որոնց օրումն է մեր սիրած Հայրենիքը:

Կը սպասենք Ձեր աջակցութեան եւ քաջալերական պատասխանին:

Հայրենակցութիւնը,

Նախաձեռնող մասնակցութիւնը

18 Մայիս 1911, Նիւ Եորք

Mrs. N. AVEDISSIAN

217 East 33rd street, New York

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԱՆԱՊԱՆՈՎՈՒԹԻՒՆԸ ԳԱՒԱՐՆԵՐՈՒ ՄԵՋ

Հայարեանկ գաւառներու մաքնաւորապէս Բաղէշի եւ Վանայ նահանգներուն անապահով վիճակը, յուզումի մէջ կը պահէ հայ ժողովուրդին սիրաւը, Ազգ. Սահմանադրութեան տարեդարձի շաքալը ախրութեամբ կ'անցնի մեզի համար. ախրութիւն որ յուսահատութեան աստիճանին կը հասնի զաւանդել հազար նորանոր խուժուած սպանութեանց յուրերով, եւ ներքին գործոյ Վսեմէ Զախաւորին կողմէ Տեղապահ Ս. Զօրեղած յայտարարութեամբ թէ տեղւոյն մէջ զինուորական եւ ոստիկանական անկազմակերպ եւ սքրտաւական վիճակէն յառաջ եկած են այդ զեպրերը, վիճակ մը զոր կազմակերպելու, ուր տեղի ոստիկանական ուժերուն բաւականապէս աշխատանքի մը հասնելուն մասին ու եւ կ'ապրեցնողութիւն մը չի լսուիր Բաղէշի կուսակալը իր հեռագրով կը հաստատէ զորքուած կրկին ոճիրները, մինչ Մշոյ Առաջն. Փոխանորդ Տ. Եղիշէ քն, կը հեռագրէ թէ Թաղավանք գիւղի բնակիչները ցիր ու ցան եղած են, սպանութեանց շարունակութեան սարսափահար: Զոհերուն ընտանիքները Մշոյ փողոցներուն մէջ հոս հոն կը թափառին, մինչ ոճ, ագրքներն ահա՛ ճակ համարձակ կը բնակին նոյն գիւղին մէջ: Տ. Եղիշէ քն. Մայիս 29 թուով ալ հետեւեալ սրտայոյզ հեռագիրը կ'ուղղէ Պատրիարքարան. — Ճեղհոնական տրիբաւարսու ոճիրներէն յուսահատած խոյ-

Թի ժողովուրդը միմյանց համար հեն
զրկուելիք հոգեւոր պաշտօնեաներուն
ուղեկցելու համար քաղաքում մը երկու
ժանտարմա ուղեցի Միւթէսարիֆուլի-
նէն. կառավարիչի փոխանորդը զիս կա-
ռավարական պաշտօնատունը կանչեց, եւ
պաշտօնապէս յայտնեց, պաշտօնը, փե-
սայի եւ ուրիշ նախատախից բառերով
խայտառակեց ու նախատեց զիս. յետոյ
սպառնացաւ թէ մեր եւ ոչ մէկ գիմուսին
կարեւորութիւն պիտի տայ «Ուր որ կ'ու-
զեի հոն գացի» գոչեց: Յիշեալին այս
բռնապետական ընթացքը թէ՛ ժողովը եւ
թէ՛ ժողովուրդը յուսահատեցուցած է, եւ
չենք գիտեր թէ որո՞ւ գիմնէր: — Վա-
նէն եւս Պատրիարքարան հասած գիր մը
կը ծանուցանէ թէ Միր Մհէ վերջին օ-
րերս իր մարդոցմով սպաննած է ոստի-
կան Արշակը եւ երկու Ասորիներ, եւ նոյն
խակ փրկանքի համար մարդեր տարեր է
իր հետը: Այս պատճառով կաւաչի ճամ-
բուն վրայ գողութիւններ եւ սպանու-
թիւններ տեղի կ'ունենան, եւ այս անա-
պահով վիճակին հետեւանքով դադրած
են նոյն խակ երթեւեկութիւնները: —
Սասունի կողմերէն ալ հեռագիրներ կ'ը-
սեն թէ 2-300 զիւղացիներ Խոյթի շրջա-
կաներէն սարսափահար փախած եւ լեցուած
են Մուշ ու Բալէշ: Մուսա պէյ որ մին-
չեւ հիմա զէպքերն ու իրերը կ'շտեղծ կը
զբաղէր, դարձեալ տապաւնէ իջեր է: Սը-
ղեմի կողմերէն եւս անհանդուրժելի վի-
ճակ մը կը ծանուցուի: Սահմանադրու-
թեան անունը կայ ինք չկայ. պաշտօնեա-
ները հին սէփմի մարդիկ, ամէն կեղծիք
մէկ կողմ դրած, առջի տառապանքներ
կը վերաբերուին Հայոց հետ: Պէյեր ու
ազաններ իրերու գերի կը դործածեն Հայե-
լը: Թուրք թերթերու մէջ իսկ հրաա-
րակուած հեռագիրներ կը ծանուցա-
նեն թէ տազնապը հետզհետէ կը սաստ-
կանայ, եւ Քուրդ ցեղերու մէջ յառաջ
եկած միութիւնը եւ իրարու ընծայած
օժանդակութիւնը պէտք կը գոյանան
խիստ եւ ազգու միջոցներու: Քուրդ
աշխարհներու հետզհետէ միացումէն՝ վախ
կայ որ կոտորածներ յառաջ գան: Եւ այս

ամենը չբաւարարեալ, Մշոյ կառավար-
չութիւնը ձեռնարկեր է 250-300 արտա-
վայր հողատու գաղթականներուն, որոնք
ուրիշ վիճակներ ալ կը հասցնեն ժողովուր-
դին: Եւ Հայերը շուարած են թէ ի՞նչ
ընեն, գաղթեալն թէ կրօնափոխ ըլլան:
Ահա կացութիւնն մը սրտամորմոք,
հազիւ 2-3 օրուան թերթերէ քաղուած,
եւ զէպքերը շարունակելի կը թուին:

Տեղապահ Ա ը Խառն Ժողովի Բշի
նիստին հաղորդեց կատարուած ապահա-
թեանցնկատմամբ Բաղէշէն ստացած հեռա-
գիրները, եւ Բ. Դրան եղած դիմումներն եւ
առնուած պատասխաններն ալ իմացնելով,
պէտք զգացուց որ Վարչութիւնը սահմա-
նէ անոնցմէ դուրս կարեւոր դատուած
միջոցներ: Ա. Ասեհնապետ Յ. Սթամպոլ-
եան էֆ. հաւատեց թէ Վարչութեան ան-
գամներն ամէն ջանք ի դորձ պիտի դը-
նեն, որպէս զի օգտակար ըլլան ազգին
ներկայ վիճակին մէջ: Յետոյ խորհրդակ-
ցեցան այն դիմումներուն վրայ, որոնք
պիտի կատարուին վերստին, ապահովու-
լիսան միջոցներ ձեռք բերելու համար
մասնաւորապէս Բաղէշի եւ Վանայ նաւ-
հանգիներուն մէջ:

* Բաղէշի ատաշնորդ Տ. Սուրէն Ծ.
Վ. Մայիս 31 թիւով կը հեռագրէ Պատ-
րիարքարան. — «Կուսակալը ճ վաշտ զգը-
քով Խոյթ մեկնեցաւ, ձեռք առնուելիք
միջոցներն կը սպասենք, այս ոպանու-
թիւններուն մասին մեր կողմէ եւս քնն-
նութիւն կը կատարուի: Սպանութեանց
մանրամասնութիւնները թղթատարին յանձ-
նուած են:»

* Զիլէէն կը գրեն թէ քիսնգոնի
Միհրդատ Քէչլէճեան անուն ազգայինը
ոստիկան Համաթի եւ երկու ընկերներուն
կողմէ ենթարկուած գանակոծումներուն
եւ խոչ անգումներուն հետեւանօք մե-
ռեր է:

* Կիրակի օր հայ Երեսփոխաններէն
Դեղամ եւ Բաստրմաճեան էֆ.ները Բ.
Դուռ դացին, ուր նախարարաց Խորհրդոյ
նիստին ներկայանալով յայտնեցին թէ
ըրդական ոճիրներն եւ թէ շարունակ-
ուին, երբեք կարեւոր մէկ տարրը եղող

Հայ ազգը վերին աստիճան յուսադատութեան պիտի մատնուի: Խնդրեցին նաեւ որ Բաղէչի կուսակալ Իսմայիլ Հազգը պէյ, որ երկիրը լաւ ուսումնասիրած է, մնայ տակաւին պաշտօնին վրայ, որովհետեւ ժամանակը անյարմար է կուսակալի փոփոխութեան: Նախարարութիւնը խօսեցաւ իր ձեռք առած միջոցներուն վրայ, եւ խոստում եղաւ ի նկատ առեալ կուսակալին մասին եղած առաջարկը:

ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ 51րդ տարեգարձը տօնուեցաւ. կիրակի օրը, վաղելու հանդիսաւորութեամբ: Առաւօտուն Տեղապահ Ա. Կոստարապէց Ա. Փրկչի մատրան մէջ, եւ իր քորովին մէջ բացատրելով Սահմանադրութեան հիմնադրներուն կատարած մեծ դերը, հրաւիրեց ժողովուրդը՝ պատկառ կենալ Օրէնքին, յարգելով պարտքը եւ գործադրելով իրաւունքը: Եկեղց. արարողութենէն ետքը տըրուած Ա. սեղանին կը նախագահէր տեղապահ Ա. Կոստարապէցը: Բաժակներ առջարկուեցան Մայր Աթոռոյ անսասան պահպանութեան, Տեղապահ Ա. հօր կենաց, Հայ ազգին յարատեւ անդորրութեան, սահմանադրական կեանքի տեւականութեան թէ՛ ազգին եւ թէ՛ երկրին մէջ, եւն: Բոլոր բաժակաճառերն ալ ծափերով կ'ողջունէին: Ուշադրութիւն գրաւեց մասնաւորապէս Վենետիկի համակերպի միտրան Հ. Սահակ Տ. Մովսէսեանի բաժակաճառը, որով չեչտեչ Հայ ազգին կատարած դերը քաղաքակրթութեան մէջ, եւ բաժակ առաջարկեց Հայ ազգին ամբողջութեան, երջանկութեան եւ զարգացման համար: Իրեն պատասխանեցին Մ. Կիւրճեան եւ Թէքէեան էֆէնտը՝ բաժակ առաջարկելով Վենետիկեան եւ Վիեննական Միութարեաններուն եւ Հայ-հոռմէական հասարակութեան համար: Երկրորդ սեղանն ալ նոյնքան ոգեւորութեամբ անցաւ:

Կէս օրէն երէք ժամ ետքը բանախօսութիւններն սկսան հանդիպակաց պարտէզին մէջ: Խօսեցան Տէր Մովսէսեան

էֆ. պեա կեդրոնի խմբակցութեան, Մ. Կիւրճեան էֆ., Տիգրան Օսեան (ընկեր Ասո) Ա. Վստմեան, Արտաշէս Քլօզեան, Վ. Թէքէեան, իւրաքանչիւրը իր եւ իր պատկանած կուսակցութեան հայեացքը պարզելով, առաւել կամ նուազ ոգեւորութեան մէջ: Ի վերջոյ սկսան պարերը, որոնք մինչեւ իրիկուն տեւեցին, եւ որոնց մէջ ուշադրաւ համակրութեամբ կը դիտուէին հայկական պարերը, շատերու յիշեցնելով իրենց հայրենի օճախը: Բաղմութիւնը անցեալ տարիէն աւելի չէր թէւ, բայց հասոյթը աւելի գոհացուցիչ եղած է, 250 ոսկի:

ԿԻԼԻԿԻՈՅ Ս. Կաթողիկոսը ընկերակցութեամբ Տ. Խորէն Եպիս. Եւ Գիւս եւ Եփրեմ Վ. ներուն Կեսարիոյ ճամբով Սիւնն պէպի Եօզկատ զացեր է, որ պիտի մնայ երկու ամիսի չափ, եւ Օգոստոսին Սիւ պիտի զառնայ, միւսնորհնութեան պատրաստութիւններ աեսնելու համար:

ԿԻՐՆ. ԺՈՂՈՎԸ, Պատր. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Ծ. Վ. առաջարկին վրայ, երկու կրօնական քննիչներ սահմանեց, մայրաքաղաքիս Եկեղեցեաց ներքին բարենորոգութեան, քահանայից պաշտօնավարութեան հսկելու եւ վարժարանաց կրօն. եւ բարոյական կրթութեան հոգ տանելու համար: Այդ քննիչներեն՝ Երուսական կողմի համար Տ. Ղեւոնդ Ծ. Վ. Դուրեան, եւ Ասիական կողմի համար Տ. Սմբատ Ծ. Վ. Գաղազեան:

— Դատական նախարարութիւնը քեզ փրկելով մը դպիրներու աստիճանին եւ հրամանաւ ուրարակիրներու մասին տեղեկութիւն ուղած ըլլալով, որոշուեցաւ պատասխանել թէ չորս աստիճան ունեցողը ստրկաւագ չէ, եւ արդիւի հրամանաւ ուրարակրութիւնը, նկատելով որ այսպէսով զիջումներ կատարուած են շատ տեղերու մէջ:

ՔԱՂԱՔ. ԺՈՂՈՎՆ. Բչ. օր իր դիւանը կազմեց, Ա. Ատենապետ ընտրելով Յակոբ էֆ. Սթամպոլեան, Բ. Ատենապետ՝ Յարութիւն էֆ. Մօսախչեան, Ա. Ատենապետ՝

Պետրոս էֆ. Խորասանճևան, Խ. Բ. Առե-
նադպրո՝ Գրիգոր էֆ. Ֆրէհատ : Անդա-
մակցութենէ հրաժարող առքթ : Տիգրան
պէյ (Աճէմեան) Կառնաճ է հրաժարակա-
նը, նոյն խոստումն ըրած են Գ. Ասլան-
եան Կ. Ս. Խորասան էֆ.ները :

ԱՅՐԻԱ.ԽՆԱՄ յանձնաժողովը գրով մը
Պատրիարքարան զիմեւով խնդրած է որ
Ասանայի կարօտեալներուն յատկացուած
եւ այս տարուան պիւտժէին մէջ ան-
ցած 10000 օսկին թագրիբով մը խնդրուի
էլմտական նախարարութեանն եւ յառ-
կայութի իր նպատակին :

ԳՐԹԳՔ ԲԻԼԻՍԷԻ Հայ գինուորհներն
իրենց լիճակին մասին գանգատ յայտնե-
լով կարգադրութիւն մէկը խնդրեն Պա-
տրիարքարանէն :

Ս.ԴՐ. ՊՈԼՍՈՅ առաջնորդ Տ. Արսէն
Ծ. Վ. Վիհունի կը գրէ Պատրիարքութեան
Թէ անցեալ կիրակի կատարուած է հիմ-
նարկէքը Ս. Լուսաւորիչ Նկեղեցիին , որ
կայարանին մօտ բնակող 150 տան ժողո-
վուրդին համար պիտի շինուի , եւ հրա-
մարտակն առնուած էր ասկէ առաջ :

ԽԱՍԳԻԻԴԼԻ Թագ. Խորհրդոյ եւ 20
չափ թաղեցնելու դիմումն վրայ, Հա
աղջկան մը կրօնափոխութեան խնդրոյն
մասին, Տեղապահ Ս.ը գործակատար Գա
մէր էֆն զրկեց Դատական նախարարու
թեան մօտ, պահանջելով որ աղջկը մէկ
երկու օր Պատրիարքարանի հսկողութեան
յանձնուի. Անուած այն պոտախանին
վրայ թէ աղջկը չափահաս է (23 տարե
կան) եւ իր տունէն բռնի առեւանդուա
լէ, հետեւապէս պէտք է ըստ սովորու
թեան քահանայ մը զրկուի զինք համոզե
լու համար, անդապահ Ս.ը թապրիրով մ
կրկնեց իր պահանջունը, պնդելով որ
պէտք է Պատրիարքարան զրկուի, որպէ
զի աղաւ կերպով յայտնէ իր մտադրու
թիւնը:

ՇԻՐԱՆԶՍՏԷՒ ԽՈՔԵԼԵԱՆԻՆ առթի
որ կատարուեցաւ Մայիս 21ին, Ռուսահա
թիւիները մասնաւոր թիւեր հռչարած են
միտատաղանդ գրողէսին. մասնաւորա
պէս Հորիզոն 21ր մայիս 21ի թիւին մէ
ժամադրաւայր, մը դարձած է ուսանա
ւանին հիւանաւոր դրողներու՝ Ա. Ահա
րոնեանի, Դ. Աղանի Թով. Թումանյանի

Լէօնի, Գ. Ֆաախեանի, Լեն. որոնք արժա-
նու որ ներդրողերով պատճառած են յորդե-
կարը, և վերլուծուած անոր տաղանդին այլ
և այլ փուլերը, Տաճար որ փափաքող է
հայ կեանքին իր ամէն կողմերով ճանչ-
ցնել, յատաճիկայ թիւով պիտի սկսի
հրատարակել հմուտ ուսումնասիրութիւն
մը ռուսահայ վկայագրին գործունէութեան
վրայ:

ԿՈՄՄՆՏԱՄ Վ. Ազգեքանահորիոյ մէջ
տուաւ իր մեծ համերգը որ ակնկալուե-
ծէն շատ անելի մեծ յաջողութիւն մը ու-
նեցաւ , բարձրացնելով Հայ դեղարուեմ
տեղի զիրքը յաջ առնէն զժուարհա-
օտարականի սնդամ : Այս առթիւ մեծա-
տաղանդ զրազեա Տիգրան Կամսարական
մածանութիւն վարպետին ուղղած է հիանալի
բացնամակ մը , զոր Տաւադի յառաջիկայ
թիւով պիտի հրատարակենք , իբրեւ նը-
ստից մը գեղեցիկ եւ հայկեցի պարականու-
թեան :

ՀԱՅՑ-ՀՌՈՄԷԱԿԱՆԱՅ ԳՈՐԾԵՐ. —
Թէրզեան Պատրիարք «Հովուական թուղթ»
մը ղրկեր է անցեալ շաբթու, կղերին եւ
հասարակութեան ուղղուած, որով կը
զատապարտէ Ազգ. Ժողովն եւ Ազգ. Կա-
նոնապարտէ Ազգ. Ժողովն, եւ կը յայտարարէ թէ
ինք չի ճանչնար Ազգ. Կազմակերպու-
թիւնն թէրզեան չի մոռնար այդ «թուղթ»ին
մէջ քարեր նետելու. Հայ-Եկեղեցիին եւ
Բողոքականութեան հասցէին կ'ըսն. Ժո-
ղովը որոշած է Եկեղեցիներու մէջ չկա-
ռաւ այս գրգռիչ գրութիւնը Ազգ. Ժո-
ղովի անցեալ ուրբաթի նիստին մէջ
Արամ էֆ Ինճիճեան կ'որդաց այն շրջա-
րերականը, որ պիտի ղրկուի գաւառները
եւ պիտի պրուստի Պոլիս, չեղոքացնելու
համար թէրզեանի այդ Հովուական թուղ-
թը Շրջաբերականը Ժողովուրդին իմաց-
նելէ ետքը թէրզեանի մեքենայութիւն-
ները, կը հերքէ անոր յաւակութիւնը,
երբ ապօրէն» կը համարի Ազգ. Ժողովն
ու կանխապիշելը Նթէ Ազգ. Ժողովն ա-
պօրէն է, ապօրէն է ուրեմն անկէ բղիժած
թէրզեանի քնարութիւնը

Ս. Վ. Ժողովը նորն ներոտին մէջ
վերջապուց կանոնադրին քննութիւնը ,
բայց միծառանդութիւն չլրջալով կարելի
չհղաւ քուէարկել նորն ներադին մէջ ըն-
դունուած յօդուածները :

Արտոնատէր ՀՄԱՅՆԱՎ՝ ԲՀՆՅ. ԷՐԹԵՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԶՆՅ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԻՄՐԱՋԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՂԱԲԻԱ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ ԻՐ

Պատնոթիւնը, Վարդապետութիւնը, Վարչութիւնը, Բարեկարգութիւնը, Արարողութիւնը, Գրականութիւնը ու ներկայ կացութիւնը.

Գաղղիներէն հրատարակուած եւ այժմ Հայերէնի վերածուած՝ յոյժ շահեկան աշխատասիրութիւն մը, բաղկացած 270 մեծագիր էջերէ: Գին 15 դրուշ (բաժի ծախքով 18 դրշ. կամ 4 ֆր.): Կեդրոնատնի՝ Վ. եւ Հ. Տեր-Ներսիսեան վաճառատուն, Պահճէ Գաբու, Կ. Պոլիս: Կը գտնուի նաեւ ամէն գրավաճառներու քով:

ԵՐՈՒԱՆԴ ՄԵՍԻԱՑԵԱՆ. — Ֆրանս. արդի գրականութեան ընկերային ձգտում.

ներք. — Գրական ուսումնասիրութիւն պատկերազարդ, Լեւոն Լալենցի յառաջաբանով: 126 էջ: Գին 3 դրշ.:

ԲԷՆՐԱՖԻՅԻ. — Նոր փարոգ. — «Բիրտոյժը արգար է» բնաբանով, — 32 էջ, գին 2 դրշ.: Հասոյթին 4 ու կէսը պիտի յատկացուի Զէյթունի Շրջանաւարտից Միութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Յ. Գ. ՄՐՄՐԵԱՆԻ

1. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. — Ի պէտս բանասիրաց եւ բարձրագոյն ուսանողաց, գին 7 դրշ.

2. ՏԻԵԶԵՐԻ ՈՒ ՓԻԼԻՍՈՓՈՅՈՒԹԻՒՆԸ. — Իբրոյթ թէնի հատուածն անմահասիրտի՝ գին 1 ու կէս դրշ.

Կը վաճառուին Կ. Պոլիս Գըլըճեան գրատունը, եւ մեծաքանակ հեղինակին քով:

1-3